ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

'-------' ---------- 2018 N -------Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան **Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.**

1. «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել վերաբաշում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1717-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն որոշման NN 1 և 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագիծը մշակվել է «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ կետին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման 2-րդ կետի 5-րդ ենթակետով, որոշման N 14 հավելվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթի պահանջներին համապատասխան՝

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)

Սույն որոշման նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռի հաշմանդամություն և սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց անհրաժեշտ վերականգնման աջակցող միջոցների տրամադրումը կազմակերպելու համար:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

2018 թվականի պետական բյուջեի «Լսողական սարքեր և հաշմանդամի սայլակներ ձեռք բերելու համար հավաստագրերի տրամադրում» ծրագրով նախատեսված է 2018 թվականի համար տրամադրել 1100 լսողական սարք և 450 անվասայլակ:

Ս.թ. հուլիսի 18-ի դրությամբ արդեն իսկ տրամադրվել է 1100 լսողական սարք ձեռք բերելու և 443 անվասայլակ ձեռք բերելու հավաստագիր: Քանակների սպառման նման տեմպերի պատճառը աննախադեպ առաջնակի դիմելիությունն է: Այսպես՝ 2018թ-ին առաջին անգամ լսողական սարքի ձեռքբերման պետական հավաստագրով տրամադրվել է 833 լսողական սարք, այսինքն լսողական սարքերի ընդհանուր քանակի 75%-ը, և 293 սայլակ, այսինքն սայլակների ընդհանուր քանակի 65%-ը: Առաջնակի դիմելիության նման աճը պայմանավորված է նրանով, որ պետական հավաստագրերի համակարգով պարագաների ձեռքբերման դեպքում ծրագրի շահառուներն ունեն ընտրության և մեծ հնարավորություն և ի տարբերություն մինչև 2018 թվականը պետական գնումների համակարգով տրամադրվող 5-6 անվանում սայլակներից և 2 տեսակ լսողական սարքերից, այժմ

նրանք կարող են ընտրել շուրջ 70 անվանում սայլակներից և շուրջ 30 անվանում լսողական սարքերից:

Առաջնակի դիմելիության նման աճի հետևանքով, սակայն, լսողական սարքեր և անվասայլակներ ստանալու իրավունք ունեցող անձինք այս տարի այլևս չեն կարողանա ստանալ իրենց անհրաժեշտ սայլակները և լսողական սարքերը: «Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ»-ի տվյալների ուսումնասիրությամբ պարզ է դառնում, որ 2015 թվականին 1001 անձի տրամադրվել է 1001 լսողական սարք, որոնցից 158 անձ մահացել է, իսկ 267 անձ 2018 թվականին ստացել է իրենց հասանելիք լսողական սարքը հերթական անգամ (լսողական սարքերը տրամադրվում են 3 տարին մեկ անգամ): Այսպիսով պարզ է դառնում, որ 2018 թվականին լսողական սարք ստանալու համար դեռևս կարող են նախարարություն դիմել լսողական սարք ստանալու իրավունք ունեցող 575 անձ: Տեղեկատվական համակարգի ուսումնասիրությունից պարզ է դառնում նաև, որ 2018 թվականի 3-րդ և 4-րդ եռամսյակում շուրջ 200 անձ դեռևս իրավունք ունի ստանալ անվասայլակներ:

Վերոգրյալով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի 10 բաժնի, 01 խմբի, 02 դասի «05.Լսողական սարքեր և հաշմանդամի սայլակներ ձեռքբերելու համար հավաստագրերի տրամադրում » ծրագիրը ավելացնելու 15,950.0 հազար դրամով, որից 9,500.0 հազար դրամ (100հատ*95.0 հազար դրամ) 100 հատ հաշմանդամի սայլակի և 6,450.0 հազար դրամ (215հատ*30.0 հազար դրամ) 215 հատ լսողական սարքի պետական հավաստագրերի ձեռքբերման համար:

Մյուս կողմից տնտեսումներ են առաջացել Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի «04.Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի գծով, մասնավորապես՝ ինքը ամիսների համար նախատեսվել է 10,316.8 հազար դրամ, տարեկան՝ 15,997.1 հազար դրամ, ծրագիրը նախատեսվում էր իրականացնել մրցակցության արդյունքում ընտրված կազմակերպության միջոցով, սակայն առ այսօր մրցույթ չի կայացել:

3.Առկա խնդրի առաջարկվող լուծումը

Պահանջվող 15,950.0 հազար դրամն առաջարկում ենք հատկացնել՝ Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի 10 բաժնի, 04 խմբի, 01 դասի, «04. Երեխաների շուրջօրյա խնամքի բնակչության սոցիալական պաշտպանության հաստատությունների շրջանավարտներին աջակցություն և խորհրդատվություն» ծրագրի գծով առաջացած տնտեսումներից:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Սույն որոշման նախագծի մշակման գործընթացում ներգրավվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի և ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչությունների համապատասխան մասնագետները:

5. Ակնկալվող արդյունքը

Հաշմանդամություն և սոցիալական այլ կարգավիճակ ունեցող անձանց անհրաժեշտ վերականգնման աջակցող միջոցների տրամադրման ապահովում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի և եկամուտների մասերում էական ավելացման կամ նվազեցման բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսերի և եկամուտների մասերում էական ավելացումներ և նվազեցումներ չեն սպասվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

«Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 1717-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում: